Նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

27/10/12թ. «Արարատ»-«Բանանց» խաղին «Արարատ» թիմի մարզիչ Աշոտ Գրիգորյանի հեռացման, մրցավարին հայհոյելու և անվայել պահվածքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 150000 դրամ:

27/10/12թ. «Ուլիս»-«Իմպուլս» խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի ուշանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

24/10/12թ. «Արտաշատ-96»-«Արարատ-96» խաղին «Արտաշատ-96» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Դանիելյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

25/10/12թ. «Իջևան-95»-«Շիրակ-95» խաղին «Իջևան-95» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Ենգիբարյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Նիկարմ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

26/10/12թ. «ԽՄՕՄՄ-97»-«Արտաշատ-97» խաղին «Արտաշատ-97» թիմի ֆուտբոլիստ Արտյոմ Գաբրիելյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 2000 դրամ:

23/10/12թ. «Գանձասար-99»-«Բանանց-1-99» խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չներկայանալու և խաղը ուշ սկսելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 12000 դրամ:

25/10/12թ. «Իջևան-95»-«Շիրակ-95» խաղին տրիբունայից հնչած հայհոյանքներ հյուր ֆոիտբոլիստների հասցեին, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Նիկարմ» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

8. Ս/թ հոկտեմբերի 28-ին մանկապատանեկան մրցումներին հայտավորված բայց չգրանցված ֆուտբոլիստների մասնակցության մասին

**8.1** 14Բ076 խաղին «Հաճըն-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Հաճըն» մանկապատանեկան ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

**8.2** 14Բ074 խաղին «Շենգավիթ-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

**8.3** 14Բ073 խաղին «Գորիս-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

«Բանանց-2-98» թիմի կազմում չհայտավորված ֆուտբոլիստ Սերգեյ 8 խաղի մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 11-րդ և 14-րդ կետերի համաձայն՝ «Բանանց-2-98» թիմին գրանցել տեխնիկական պարտություն բոլոր 8 խաղերում և «Բանանց-2-98» թիմը հանել առաջնությունից, «Բանանց-2-98» թիմի մարզիչ Սամվել Դերձյանին որակազրկել մինչև 30.04.2013թ., «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 320000 դրամ: